



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 010301000 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 1 ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (covid-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» թիվ 1514-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝


1. Հաստատել՝ «Ուսումնական գործընթացի կազմակերպման մասին կանոնակարգի» փոփոխությունները և լրացումները (կցվում է) (22-02-01-01).
2. Հաստատել՝ «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հակահրդեհային միջոցառումների կանոնակարգը» (կցվում է) (22-02-01-02).
3. Հաստատել Համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա կլինիկական օրդինատորայի վճարովի համակարգում սովորողների վարձավճարների զեղչերի չափերը՝ անվանական կրթաթոշակառուներին՝ ուսման վարձավճարի 50, իսկ գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին՝ 30 տոկոսի չափով (22-02-01-03).



4. Հաստատել բժիշկների և բուժքույրերի կատարելագործման ծրագրերը (22-02-01-04).
5. Համալսարանի կենսաքիմիայի ամբիոնում տեղակայված թիվ 1 դասասենյակը անվանակոչել Լիլիա Չիլինգարյանի, 6-րդ լսարանը՝ Նելլի Խոստիկյանի և 8-րդ լսարանը Ռոբերտ Քարամյանի անուններով (22-02-01-05).
6. Ալբերտ Անդրանիկի Վանյանի, Աննա Արշակի Մինայանի 90 ամյա հոբելյանների և Կառլեն Գրիգորի Ադամյանի 85 ամյակի կապակցությամբ նրանց պարգևատրել համալսարանի հուշամեդալներով (22-02-01-06):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ